Շաբաթական ակնարկ 24.03.25

Սույն «Շաբաթական ակնարկ» վերլուծություն՛ը կազմվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից և կարող է օգտագործվել **միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկություն:** Վերջինս արդիական է հրապարակման օրվանից շուկայի վարքագծով պայմանավորված ողջամիտ ժամկետում: «Շաբաթական ակնարկ» վերլուծական հաշվետվությունը կազմվել է ներկայումս հասանելի **հանրային տեղեկատվության** հիման վրա, որն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ը համարում է վստահելի: Սակայն, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **չի երաշխավորում,** որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն **չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ ֆինանսական գործարք իրականացնելու դեպքում:**

«Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ ներկայացված գործիքների ընտրությունը պայմանավորված է **շուկայի ընդհանրական մոտեցմամբ**, բարձր շրջանառության ծավալ ու հանրային լայն ընկալում ունեցող ընկերությունների բաժնետոմսերի նկատմամբ հաշվետու ժամանակահատվածում ձևավորված մեծ հետաքրքրությամբ: Հետևաբար, ընտրված ներդրումային պրոդուկտները կարող են **չհամապատասխանել բոլոր ներդրողների ցանկություններին և պահանջներին**: Ներդրումներ իրականացնող ցանկացած անձ պետք է **անհատապես ուսումնասիրի և յուրովի գնահատի** իր ներդրումային հնարավորությունները, ներդրումային պորտֆելի կառուցվածքը և դրանցից բխող ռիսկերը բոլոր կամ առանձին վերցրած ակտիվների գծով: Նախքան որևէ ներդրումային որոշում կայացնելը կամ գործարք իրականացնելը, յուրաքանչյուր ներդրող պետք է ուսումնասիրի այն տեղեկատվությունը, որը պարունակում է ռիսկերի, միջնորդավճարների և հնարավոր այլ ծախսերի նկարագրությունը: Յուրաքանչյուր ներդրող պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի **ռիսկ/եկամուտ հարաբերակցությանը** և համոզվի, որ ներդրումը համապատասխանում է վերջինիս ներդրումային նպատակներին:

Հնարավոր կորստի կամ եկամտի ցանկացած կանխատեսում **զուտ նկարագրություն** է և չպետք է դիտվի որպես հնարավոր առավելագույն կորստի կամ շահույթի սահմանափակում: Ներդրումները **երաշխավորված կամ ապահովագրված չեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ** կամ այլ ֆինանսական ընկերության կամ որևէ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ապահովագրական գործակալության կողմից, հետևաբար **բախվում են ներդրումային ռիսկերի հետ**, ներառյալ՝ **ողջ գումարի հնարավոր կորստի ռիսկը:** Ներդրողներն, ովքեր ներդրումներ են կատարում արտարժույթով, պետք է տեղյակ լինեն փոխարժեքի տատանումների ռիսկի մասին, որը կարող է հանգեցնել ներդրված գումարի կորստի:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ենթադրում է, որ հաճախորդը նախքան ներդրումներ իրականացնելը, **գիտակցում և տեղյակ է գործարքի հետ կապված ցանկացած հարկային և իրավական** պարտավորությունների մասին: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **պատասխանատվություն չի կրում** այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր **վնասների համար**, որոնք առաջացել են «Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

Շուկաները նախորդ շաբաթ՝ ամփոփ

Նախորդ շաբաթ ԱՄՆ-ի բոլոր հիմնական ինդեքսները արձանագրեցին դրական եկամտաբերություն:



ԴՊՀ-ի մեկնաբանությունների ֆոնին ԱՄՆ-ի պարտատոմսերի եկամտաբերությունը նվազեց:

Ոսկու գինը վերջին 12 շաբաթներից 11-ում աճել է:

Այժմ շուկայի մասնակիցները ակնկալում են տոկոսադրույքի երեք իջեցում:



Նախորդ շաբաթվա ընթացքում S&P 500-ը աճեց 0.51 % -ով

Նախորդ շաբաթվա ընթացքում Nasdaq-ը աճեց 0.25 %-ով

Նախորդ շաբաթվա ընթացքում Dow Jones-ը աճեց 1.22 %-ով

Նախորդ շաբաթվա ընթացքում Russell 2000-ը աճեց 0.67 %-ով

Ինդեքսներ

Հիմնական բաժնետոմսային ինդեքսների դինամիկան նախորդ շաբաթվա ընթացքում.

- Վերջին շաբաթների ընթացքում առաջին անգամ ԱՄՆ-ի հիմնական ինդեքսները արձանագրեցին դրական եկամտաբերություն:
- Դրական եկամտաբերության հիմնական պատճառը Թրամփի հայտարարությունն էր այն մասին, որ մաքսատուրքերի հարցում ճկունություն կցուցաբերվի ընդգծելով, որ այդ ճկունությունը բխում է մաքսատուրքերի փոխադարձ լինելու հանգամանքից:
- Մեկ այլ գործոն էր ԴՊՀ-ի մեկնաբանությունները կապված առևտրային քաղաքականության, գնաճի և տնտեսական անորոշության վերաբերյալ: Շուկայի մասնակիցները այս հայտարարությանը արձագանքեցին դրական, հավանաբար ակնկալելով ապագա դրամական աջակցության:



Magnificent 7-ը ևս մեկ շաբաթ փակեց բացասական արդյունքներով, վերջին ութ շաբաթներից յոթում արձանագրելով բացասական դինամիկա: Այս անկման հնարավոր պատճառները ներառում են ոլորտի ռոտացիան և եկամուտների ֆիքսումը շուկայի մասնակիցների կողմից, որը հանգրցրեց Magnificent 7-ի անկմանը:

Նախորդ շաբաթ VIX ինդեքսը նվազեց վկայելով շուկայում ենթադրվող անկայունության անկման մասին: Այս անկման հիմնական պատճառը կարող է լինել շուկայական հեջավորման հետընթացը, քանի որ գնման օպցիոնի տատանողականությունը զգալիորեն նվազել է՝ համեմատած վաճառքի օպցիոնի տատանողականության հետ:

Բաժնետոմսերի շուկա| 4-րդ եռամսյակի հաշվետվություններ

Accenture-ը (ACN) գերազանցեց EPS-ի սպասումները և գերազանցեց հասույթի սպասումները 0.27%-ով: Այնուամենայնիվ, ընկերության բաժնետոմսերի գինը զգալիորեն նվազեց, երբ գործադիր տնօրենը մեկնաբանեց, թե ինչպես է Թրամփի վարչակազմի կողմից կառավարվող արդյունավետության դեպարտամենտը բացասաբար ազդում ընկերության վաճառքի և հասույթի վրա:

Nike-ը (NKE) գերազանցեց ինչպես EPS-ի, այնպես էլ հասույթի սպասումները, սակայն ընկերության բաժնետոմսերի գինը նվազեց: Քանի որ ընկերությունը չորրորդ եռամսյակում ակնկալում է վաճառքների շատ ավելի կտրուկ անկում, քան ակնկալում էին վերլուծաբանները: Բացի այդ, ընկերության եկամուտները նվազել են, ինչը պայմանավորված է Չինաստանում վաճառքի ծավալների նվազմամբ:

Բաժնետոմսերի շուկա| 4-րդ եռամսյակի հաշվետվություններ

Micron Technology-ն (MU) գերազանցեց EPS-ի և հասույթի սպասումները: Բացի այդ, ընկերության հասույթը տարեկան կտրվածքով աճել է 38%-ով՝ հասնելով 8.05 միլիարդ դոլարի: Այնուամենայնիվ, ընկերության բաժնետոմսի գինը նվազեց համախառն շահույթի հեռանկարի հետ կապված մտահոգությունների պատճառով:

FedEx-ը (FDX) գերազանցեց հասույթի սպասումները, սակայն բաց թողեց EPS-ի սպասումները: Ընկերությունը նաև կրճատեց ամբողջ տարվա շահույթի և եկամուտների կանխատեսումները՝ ԱՄՆ արդյունաբերական տնտեսության թույլ պահանջարկի և անորոշության պատճառով, քանի որ նախագահ Թրամփը մաքսատուրքեր է սահմանում առևտրային գործընկերների վրա, որը ազդում է ընկերության բաժնետոմսի գնի վար:

Պարտատոմսերի շուկա

- Նախորդ շաբաթվա ընթացքում ԱՄՆ-ի պարտատոմսերի շուկան արձանագրեց եկամտաբերության անկում (գների աճ), իսկ լավագույնս իրենց դրսևորեցին միջնաժամկետ պարտատոմսերը:
- Եկամտաբերության անսպասելի անկումը հաջորդեց մաքսատուրքերի ծրագրի հետ կապված տնտեսական անորոշության մասին ԴՊՀ-ի մեկնաբանություններին, ինչը ստիպեց շուկայի մասնակիցներին ակնկալել, որ տոկոսադրույքների կրճատումը կխթանի տնտեսությունը:

Պարտատոմսերի շուկա | դոլարի ինդեքս | տոկոսադրույքի ակնկալվող նվազեցում

Նախորդ շաբաթ շուկայի մասնակիցների սպասումները կապված տոկոսադրուքների նվազեցման հետ վերադարձավ նախկին միջակայքին և այժմ ակնկալվում է տոկոսադրույքի երեք իջեցում նախկին երկուսի փոխարեն, որը հետևանք է թույլ տնտեսական տվյալների և ԴՊՀ-ի հայտարարությունների:

Չնայած տոկոսադրույքի կրճատման ակնկալիքները աճել են, դոլարի ինդեքսը նույնպես աճել է (այս երկուսը սովորաբար բացասաբար կոռելացված են), դոլարը բարձրացել է իր 200 օրվա սահող միջինից: Սա կարող է դիտվել որպես պոտենցիալ ճշգրտում նախորդ շաբաթների զգալի անկումից հետո:

Ոսկու գները վերջին 12 շաբաթներից 11-ում աճել են: Թեև ուրբաթ օրը ոսկու գինը նվազեց՝ դոլարի ամրապնդման արդյունքում, սակայն աջակցություն գտավ և պահպանեց 3000 դոլարի մակարդակը:

Նախորդ շաբաթ նավթի գները բարձրացան Իրանի նկատմամբ ԱՄՆ նոր պատժամիջոցների, ՕՊԵԿ+-ի արդյունահանման կրճատման սպասումների և աշխարհաքաղաքական լարվածության պատճառով:

Կրիպտոարժույթներ

- Նախորդ շաբաթ Bitcoin-ի գինը մնաց գրեթե անփոփոխ, մինչդեռ մյուս երկու հիմնական կրիպտոարժույթները՝ XRP-ը և ETH-ը գրանցեցին դրական եկամտաբերություն:
- Նախորդ շաբաթ կրիպտոարժույթների շուկայում ամենանշանակալից նորությունը SEC-ի կողմից Ripple-ի (XRP) դեմ հայցից հրաժարվելն էր, ինչը հանգեցրեց Ripple-ի գնի կտրուկ աճին:

Հետաքրքիր փաստեր

Ըստ KOBEISSI LETTER-ի, հեջ-ֆոնդերը վերջին չորս շաբաթվա ընթացքում վաճառում են տեխնոլոգիական ոլորտի բաժնետոմսերը՝ 2021 թվականի հունվարից ի վեր ամենաարագ տեմպերով:
Հեջ-ֆոնդերը ամենաարագ տեմպերով գնում էին տեխնոլոգիական ոլորտի բաժնետոմսեր 2022 թվականի արջի շուկայի ավարտից ընդամենը մի քանի շաբաթ առաջ:



Հետաքրքիր փաստեր

Ըստ KOBEISSI LETTER-ի՝ համաշխարհային շուկայի կապիտալիզացիայում ԱՄՆ մասնաբաժինը վերջին երկու ամիսների ընթացքում նվազել է մոտ 3.5 տոկոսային կետով և այժմ կազմում է 47.5%՝ ամենացածր մակարդակը 2024 թվականի երկրորդ եռամսյակից ի վեր: Սա ամենամեծ անկումն է 2022 թվականի արջի շուկայից հետո, ընդ որում նմանատիպ կտրուկ անկում գրանցվել է միայն 2008 թվականի ֆինանսական ճգնաժամի ժամանակ:

Հետաքրքիր փաստեր

Ընդամենը 22 օրվա ընթացքեում S&P 500 ինդեքսը նվազել է 10%-ով, որը վեցերորդ ամենաարագ անկումն է վերջին 75 տարվա ընթացքում:



ԱՄՆ-ի տնտեսական օրացույց

Այս շաբաթ 146 ընկերություններ պատրաստվում են հրապարակել 4-2024 եռամսյակի իրենց ֆինանսական հաշվետվությունները: Առավել հայտնի ընկերություններից են՝ Cintas-ը (CTAS), Paychex-ը (PAYX), Lululemon-ը (LULU) և այլ կազմակերպություններ:

#1 / 127 Total save as portfolio | create alert Refresh: 3min | off Page 1 / 7

No.	Ticker	Company	Sector	Industry	Country	Market Cap	P/E	Price	Change	Volume
1	CTAS	Cintas Corporation	Industrials	Specialty Business Services	USA	78.47B	46.93	194.46	-0.97%	1,583,196
2	PAYX	Paychex Inc	Technology	Software - Application	USA	52.29B	30.56	145.23	-1.56%	1,464,068
3	LULU	Lululemon Athletica inc	Consumer Cyclical	Apparel Retail	Canada	41.17B	23.43	324.45	-1.55%	1,106,531
4	MKC	McCormick & Co., Inc	Consumer Defensive	Packaged Foods	USA	21.62B	27.60	80.70	-0.79%	1,679,977
5	DLTR	Dollar Tree Inc	Consumer Defensive	Discount Stores	USA	13.89B	-	64.59	0.45%	3,366,420
6	CHWY	Chewy Inc	Consumer Cyclical	Internet Retail	USA	13.21B	34.96	32.32	0.22%	4,270,079
7	JEF	Jefferies Financial Group Inc	Financial	Capital Markets	USA	12.20B	19.89	59.18	-0.20%	1,475,479
8	SAIL	Sailpoint Inc	Technology	Software - Infrastructure	USA	11.06B	-	19.88	-0.35%	702,287
9	SNX	TD Synnex Corp	Technology	Electronics & Computer Distribution	USA	10.93B	16.28	129.58	-1.80%	778,643
10	GME	Gamestop Corporation	Consumer Cyclical	Specialty Retail	USA	10.50B	131.49	23.51	-0.84%	1,998,220
11	CNM	Core & Main Inc	Industrials	Industrial Distribution	USA	9.64B	22.85	48.51	-1.10%	1,354,486
12	SFD	Smithfield Foods, Inc	Consumer Defensive	Farm Products	USA	7.72B	-	19.65	-0.66%	560,713
13	RUM	Rumble Inc	Communication Services	Internet Content & Information	USA	4.71B	-	7.74	-1.40%	1,809,300
14	KBH	KB Home	Consumer Cyclical	Residential Construction	USA	4.38B	7.24	61.27	-0.41%	1,203,524
15	BRZE	Braze Inc	Technology	Software - Application	USA	3.73B	-	36.05	-0.74%	651,366
16	ATAT	Atour Lifestyle Holdings Ltd ADR	Consumer Cyclical	Lodging	China	3.41B	25.92	30.21	-2.26%	733,483
17	OKLO	Oklo Inc	Utilities	Utilities - Regulated Electric	USA	3.39B	-	27.77	-1.00%	13,191,673
18	PONY	Pony AI Inc. ADR	Technology	Information Technology Services	China	3.35B	-	12.50	-0.40%	1,271,592
19	FUL	H.B. Fuller Company	Basic Materials	Specialty Chemicals	USA	2.92B	23.49	53.94	0.71%	717,937
20	CNXC	Concentrix Corp	Technology	Information Technology Services	USA	2.90B	12.14	45.06	-3.74%	598,033

Filters: earningsdate:nextweek export

Այս շաբաթվա ԱՄՆ տնտեսական օրացույցը

MONDAY, MARCH 24			
9:45 am	S&P flash U.S. services PMI	March	51.0
9:45 am	S&P flash U.S. manufacturing PMI	March	52.7
TUESDAY, MARCH 25			
8:30 am	Philadelphia Fed manufacturing survey	March	18.1
9:00 am	S&P Case-Shiller home price index (20 cities)	Jan.	4.5%
10:00 am	Consumer confidence	March	98.3
10:00 am	New home sales	Feb.	657,000
WEDNESDAY, MARCH 26			
8:30 am	Durable-goods orders	Feb.	3.2%
8:30 am	Durable-goods minus transportation	Feb.	0.0%
1:10 pm	St. Louis Fed President Alberto Musalem speaks		

THURSDAY, MARCH 27				
8:30 am	Initial jobless claims	March 22		
8:30 am	GDP (second revision)	Q4		2.3%
8:30 am	Advanced U.S. trade balance in goods	Feb.		-$153.3B
8:30 am	Advanced retail inventories	Feb.		-0.1%
8:30 am	Advanced wholesale inventories	Feb.		0.7%
10:00 am	Pending home sales	Feb.	--	-4.6%
4:30 pm	Richmond Fed President Tom Barkin speaks			
FRIDAY, MARCH 28				
8:30 am	Personal income	Feb.		0.9%
8:30 am	Personal spending	Feb.		-0.2%
8:30 am	PCE index	Feb.	--	0.3%
8:30 am	PCE (year-over-year)		--	2.5%
8:30 am	Core PCE index	Feb.		0.3%
8:30 am	Core PCE (year-over-year)			2.6%
10:00 am	Consumer sentiment (final)	March		57.9

060 408 005, 060 408 002, 010 592 301
Երևան, Բուզանդ 87, 85 գրասենյակ
brokerage@araratbank.am